ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

Ալեքսանդրապոլի (Լենինական) Ս. Աստվածածին եկեղեցու հայերեն ձեռագրերի հավաքածուն ամփոփում է X—XVIII դդ. ընդօրինակված տարբեր բովանդակությամբ 27 մատյան։ Դրանք, էջմիածնի Մայր Աթոռի գերագույն հոգևոր խորհրդի հանձնարարությամբ, 1924 թ. էջմիածին է տեղափոխել Մեսրոպ Մագիստրոս Տեր-Մովսիսյանը և հանձնել Մատենադարանի տնօրինությանը։

Հավաքածուն սկզբնավորվել է 1830 թ. Ստեփանոս արքեպս. Զախալյանի (Խաժակյանի) նախաձեռնությամբ՝ եկեղեցու հիմնադրման հետ, մեծ մասամբ Բասենից և Կարսից բերված եկեղեցապատկան և մասնավոր անձանց սեփականություն հանդիսացող ձեռագրերի հաշվին։

Թե քանի ձեռագիր է ունեցել հավաքածուն սկզբնապես և քանակական ինչպիսի փոփոխությունների է ենթարկվել իր անկախ գոյության 95 տարիների ընթացքում (1830—1924), դժվար է ասել, որովհետև ձեռքի տակ չունենք որևէ ցանկ կամ ցուցակ, եթե այդպիսիք ընդհանրապես եղել են, ուր արձանագրված լինեին դրանք։ Մեզ են հասել հետևյալ երկու ցանկերը, երկուսն էլ կազմված 1924 թ.՝ ձեռագրերը էջմիածին տեղափոխելու կապակցությամբ։ Դրանցից մեկը կազմել է Մեսրոպ Տեր-Մովսիսյանը տեղում, իսկ մյուսը՝ Մատենադարանի տնօրինությունը էջմիածնում։

Ահա դրանք.

Ա. Մեսրոպ Մագիստրոս Տեր-Մովսիսյան. «Զեռագիրք Սուրբ Աստվածածին Եկեղեցու Ալեքսանդրապոլում»[1]— Սույն ցանկում 1—28 հերթական թվահամարների տակ արձանագրված է 18 Ավետարան (№№ 1—18), 1 Ճաշոց (№ 19), 5 Հայսմավուրք (№№ 20—24), 1 Մաշտոց (№ 25), 1 Շարակնոց (№ 26), 1 Հմայիլ (№ 27) և Նոր Ջուղայում 1643 թ. տպագրված 1 Ժամագիրք (№ 28)։ Ցանկի վերջում Մ. Տեր-Մովսիսյանը գրել է. «Այս ձեռագրերը 1924-ի ապրիլի 2-ին Աղեքսանդրապոլից բերա և հանձնեցի էջմիածնի Մատենադարանին»։

Այսպիսով, Մ. Տեր-Մովսիսյանի ցանկը ամփոփում է 26 ձեռագիր, 1 Հմայիլ և 1 հնատիպ գիրք (տե՛ս համեմատական տախտակ ա)։

Բ. «Է[չմիածնի] Դ[երազույն] Հ[ոգևոր] Խ[որհրդի] միջոցով Լենինականից ստացված ձեռագրերի ցուցակը»[2]— Սույն ցանկում 1—27 թվահամարների տակ նշված են Մ. Տեր-Մովսիսյանի արձանագրած նույն ձեռագրերն ու 1 Հմայիլը և առանց թվահամարի՝ նույն հնատիպ գիրքը (պայմանականորեն № 28), սակայն ձեռագրերի տարբեր դասավորությամբ և թվահամարների տարբեր հերթականությամբ. 5 Հայսմավուրք (№№ 1—5), 18 Ավետարան (№№ 6—23), 1 Ավետարան Ճաշու (իմա՛ Ճաշոց, № 24), 1 Մաշտոց (№ 25), 1 Շարակնոց (№ 26), 1 Հմայիլ (№ 27), 1 «Տպագիր Ժամագիրք 1643 թվի, Նոր Ջուղա» (№ 28)։ Ի միջի այլոց №№ 10—16 ձեռագրերը նշված են մեկ ընդհանուր ձևակերպմամբ. «Ավետարաններ թղթյա յոթ հատ, որոնք անթվական են»։ Ի տարբերություն Մ. Տեր-Մովսիսյանի ցանկի, այստեղ հավելյալ նշված է նաև «Եփրեմ կաթուղիկոսի գրած մի կոնդակ» (առանց թվահամարի, պայմանականորեն № 29)։

Այսպիսով, էԳՀԽ-ի ցանկը նույնպես ամփոփում է 26 ձեռագիր, 1 Հմայիլ և 1 հնատիպ գիրք, որոնց արդի թվահամարները, ինչպես տեսանք, հայտնի են։ Ինչ վերաբերում է Եփրեմ կաթողիկոսի գրած կոնդակին, ապա այն պետք է մուծված լինի Մատենադարանի արխիվի համապատասխան ֆոնդը, սակայն, մատենագիտական տվյալների անբավարարությունն ու համապատասխան նշման բացակայությունը թույլ չեն տալիս որոշակիորեն կանգ առնել եղած համանման կոնդակներից որևէ մեկի վրա (տե՛ս համեմատական տախտակ բ)։

Ձեռագրերը Մատենադարան մուտք գործելուց հետո, բացառությամբ 1-ի (ՄՏՄ № 7, էԳՀԽ № 12), մուծվել են ժամանակի «խառն հավաքածու» կոչվող ձեռագրերի շարքը, ապա, ավելի ուշ միացվել ընդհանուր ֆոնդին (տե՛ս համեմատական տախտակ գ)։

Թե ում են պատկանել այս ձեռագրերը նախքան Ալեքսանդրապոլի Ս. Աստվածածին եկեղեցու սեփականություն դառնալը, գրեթե ոչինչ հայտնի չէ։

---

1 Մատենադարանի Անտիպ ձեռագրացուցակների հավաքածու, Գործ Մ. Մագիստրոսի, 133, ցուցակ № 17։

2 Մաշտոցի անվ. Մատենադարանի անտիպ ձեռագրացուցակների հավաքածու, № 29բ։

ա. Համեմատական տախտակ Ալեքսանդրապոլի Ս. Աստվածածին եկեղեցու հայերեն ձեռագրերի հին և նոր թվահամարների (ըստ Մ. Տեր-Մովսիսյանի 1924 թ. ցանկի)

ՄՏՄ 1924	Մոնդրն արդի	ՄՏՄ 1924	Մոնդրն արդի	ՄՏՄ 1924	Մոնդրն արդի	ՄՏՄ 1924	Մոնդրն արդի
1	6384	8	6 04	15	6557	22	6199
2	6388	9	6499	16	6507	23	6205
3	6519	10	6386	17	6363	24	6213
4	6845	11	6 20	18	6652	25	6967
5	6387	12	6374	19	6500	26	6973
6	6305	13	6858	20	6224	27	Չմ 5
7	8909	14	6400	21	6215	28	Հտ 417

բ. Համեմատական տախտակ Ալեքսանդրապոլի Ս. Աստվածածին եկեղեցու հայերեն ձեռագրերի հին և նոր թվահամարների (ըստ ԷԳՀԽ-ի 1924 թ. ցանկի)

ԷԳՀԽ 1924	Մոնդրն արդի	ԷԳՀԽ 1924	Մոնդրն արդի	ԷԳՀԽ 1924	Մոնդրն արդի	ԷԳՀԽ 1924	Մոնդրն արդի
1	6224	9	6845	17	6387	25	6967
2	6215	10	6320	18	6386	26	6973
3	6199	11	6904	19	6374	27	Չմ 5
4	6213	12	8909	20	6858	[28]	Հտ 417
5	6205	13	6557	21	6400	[29]	Արխիվ
6	6388	14	6499	22	6363		
7	6384	15	6507	23	6652		
8	6519	16	6305	24	6500		

գ. Համեմատական տախտակ Ալեքսանդրապոլի Ս. Աստվածածին եկեղեցու հայերեն ձեռագրերի նոր և հին թվահամարների (ըստ Մատենադարանի ՆՆ-ի)

Մատենադարան		Ս. Աստվածածին		Մատենադարան		Ս. Աստվածածին	
Արդի	«Խառն»	ՄՏՄ	ԷԳՀԽ	Արդի	«Խառն»	ՄՏՄ	ԷԳՀԽ
6199	1751	22	3	6500	1807	19	24
6205	1750	23	5	6507	1805	16	15
6213	1749	24	4	6519	1815	3	8
6215	1752	21	2	6557	1840	15	13
6224	1761	20	1	6652	1830	18	23
6305	1764	6	16	6845	1860	4	9
6320	1659	11	10	6858	1865	13	20
6363	1777	17	22	6904	1866	8	11
6374	1779	12	19	6967	1877	25	25
6384[3]	1790	1	7	6973	1874	26	26
6386	1774	10	18	8909[4]	—	7	12
6387	1776	5	17	Չմ 5	—	27	27
6388	1776	2	6	Հտ 417	—	28	[28]
6400	1783	14	21	Արխիվ	—	—	[29]

Օ. Ս. ԵԳԱՆՅԱՆ

3 Ձեռագրիս հիշատակարանը եղել է Մոսկվայի Լազարյան ճեմարանի հայերեն ձեռագրերի հավաքածուի մեջ, այն Հայաստան է տեղափոխել Ա. Մովսյանը. նախապես գրանցված էր Մատենադարանի Պատարիկների ֆոնդում (№ 609), այժմ միացված է մայր ձեռագրին (տե՛ս մեր հաղորդումը՝ «Անձնագիրը գտնում է տիրոջը», «Գրական թերթ», 1965, № 2)։

4 Սույնից մեկ թերթ եղել է Երևանի Գրականության թանգարանի հայերեն ձեռագրերի հավաքածուի մեջ (№ 1109)։ Այժմ միացված է մայր ձեռագրին (թերթ 122 գ)։